



# Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ



Ոստիկանության կողմից և իմ անունից Ամանորի և Սուրբ Ծնունդի տոների առթիվ շնորհավորում եմ ոստիկանության անձնակազմին, վետերաններին, նրանց ընտանիքներին ու հարազատներին:

2018-ը սովորական տարի չէր, եւ բեկումնային փուլեր անցնելով՝ ոստիկանության համակարգն իր ծառայությամբ վերահաստատեց, որ պետականության ամուր հիմնասյուներից է, օրինակապետության երաշխավոր, հասարակական կարգի, հանրային անվտանգության ու բաղաբացու իրավունքների պահպանը:

Այսօր ոստիկանությունը կոռուպցիայի, սպորտի, անարդարության դեմ պայքարի առաջնագծում է եւ հաստատագրում է օրենքի առաջ բողոքի հավասարության սկզբունքի գերակայությունը, հավատարմությունն իր կոչմանը, օրինակապետության հանդեպ բաղաբացու իրավունքն ու հավատը:

Այսօր ոստիկանության զորքերը մարտական հերթապահություն են իրականացնում պետական սահմանին՝ հասարակության անդորրի պահպանումը զուգորդելով երկիրն արտաքին ոտնձգություններից պաշտպանելու սրբազան առաքելությանը:

Այսօր աննախադեպ ամուր է հասարակություն-ոստիկանություն կապը, ինչը ոստիկանության հանդեպ հանրային վստահության լավագույն ցուցիչն է եւ արտահայտվում է ոչ միայն ոստիկանություն դիմողների հսկայական թվով, այլեւ իրավապահ մարմնի ցուցաբերվող ամենօրյա բաղաբացիական աջակցությամբ:

Կարող եմ փաստել, որ ոստիկանությունը պատվով բռնեց ժամանակի բնությունը եւ մյուս իրավապահ կառույցների հետ սերտ համագործակցությամբ շարունակվում է լիարժեք իրականացնել օրենքով իրեն վերապահված լիազորությունները, որոնք նախնառաջ ընկալում ու գնահատում ենք որպես հանրային պատվիրան ու բաղաբացու պահանջ:

Ոստիկանությունը գործունեության այլ ուղի ունենալ չի կարող, եւ այսօր ու վաղն էլ մեր գերխնդիրն է՝ հասարակական կարգի պահպանում, պայքար հանցավորության դեմ, ոստիկանության ողջ համակարգի, հատկապես հասարակությանը ծառայություն մատուցող ստորաբաժանումների աշխատանքի կատարելագործում, հասարակության հետ կապի ամրապնդում, ակիրյալ ծառայություն պետությանն ու ժողովրդին:

Անցնող տարում արդեն հաստատել ենք, որ կարողանում ենք արդյունավետ գործել բոլոր պայմաններում, իսկ 2019-ը պետք է լինի շարունակական ինքնակատարելագործման, ծառայության հետագա բարեփոխման, հասարակության սպասումների լիարժեք իրագործման տարի:

Եւ հավատում եմ մեր վստահ ընթացքին: Կրկին շնորհավորում եմ գալիք տոների առթիվ, մաղթում արդյունավետ ծառայություն եւ անձնական ձեռքբերումներ:

Երջանիկ եղեք:  
**Վալերիյ ՕՍԻՊՅԱՆ**  
ՀՀ ոստիկանության պետ

## Աշխատանքային խորհրդակցություն ոստիկանությունում

Դեկտեմբերի 22-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը: Եւ շնորհակալություն հայտնեց Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում բարեխիղճ ծառայության համար, ինչի շնորհիվ Հայաստանը ունեցավ անսխաղեպ ազատ, արդար ու թափանցիկ ընտրություններ:



Վալերիյ Օսիպյանը ոստիկանության բոլոր ստորաբաժանումներին հրամայեց անցնել ուժեղացված ծառայության: Եւ նշեց, որ տոնական օրերին պետք է բացառվեն լուրջ կանոնների խախտումները: Հրավառություններն իրականացնել մինչեւ ժամը 23-ը, օրենքը բացառություն է սահմանում միայն Ամանորի գիշերը: Լուրջ կանոնների խախտումները բացառելու ուղղությամբ հանդիպումներ ունենալ ուղեւորանային համալիրների ու զվարճանքի վայրերի տնօրինությունների

հետ, կատարել բացառական աշխատանք:

Հանապարհային ոստիկանությանը հրահանգվեց ուժեղացնել ծառայությունը մայրաքաղաքում եւ մարզերում: Այս օրերին հիմնականում Երեւանում ծանրաբեռնվում է երթուղիները, այդ

գործերը կլինեն պետական սահմանին: Ոստիկանության պետը եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով նրանց՝ հորդորեց այդ օրերին կրկնապատկել ուշադրությունն ու զգոնությունը եւ մաղթեց բարի ու խաղաղ ծառայություն:

Ոստիկանության պետը հույս հայտնեց, որ ոստիկանությունն ինչպես ընտրություններին, այնպես էլ այս անգամ բարեխիղճ ծառայությամբ կապահովի մեր քաղաքացիների հանգիստն ու անվտանգությունը:



Խորհրդակցության ավարտին ԱՄ արտահերթ ընտրությունների ընթացքում բարեխիղճ ծառայության, հանցագործություններ բացահայտելու, հետախուզվողներ հայտնաբերելու եւ հասարակական կարգի անվտանգությունն ապահովելու համար ոստիկանության մի շարք ծառայողներ պարգևատրվեցին:

## Բացահայտվել են յուրացման դեպքեր

Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Արարատի մարզի Արեւաբույր համայնքի նախկին ղեկավարն իր պաշտոնավարման ընթացքում թույլ է տվել մի շարք յուրացումներ ու չարաշահումներ:



Վարչության ծառայողները, համագործակցելով ոստիկանության Արարատի մարզային վարչության ու Մասիսի բաժնի ծառայողների հետ, պարզել են, որ Արեւաբույր համայնքի նախկին ղեկավարը, օգտագործելով պաշտոնական դիրքը, 2014 թվականից մի բնակչի հրամանագրել է որպես համայնքապետի տեղակալ, այնուհետեւ՝ առաջատար մասնագետ, սակայն վերջինս պատշաճ աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա փոխարեն աշխատանքն արել են համայնքապետարանի այլ աշխատակիցներ: Հրամանագրված քաղաքացու անվամբ համայնքապետարանի բյուջեից դուրս է գրվել շուրջ 4 միլիոն 370 հազար դրամ աշխատավարձ:

Յուրացման մեկ այլ օպերատիվ տեղեկություն ստացվել է Շիրակի մարզից: Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչության աշխատակիցները, համագործակցելով ոստիկանության Շիրակի մարզային վարչության ու Աշոցքի բաժնի ծառայողների հետ, պարզել են, որ Շիրակի մարզի Գոգիովիտ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը, օգտագործելով պաշտոնական դիրքը, 2015 թ. բակապահ է ձեւակերպել եղբոր կնոջը, իսկ

2017-2018 թթ. օպերատոր է ձեւակերպել որդուն: Նրանք իրականում աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձը շուրջ երկու միլիոն դրամ, յուրացվել է:

Հաջորդ դեպքն արձանագրվել է Արմավիրի մարզում: Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչության, Երեւան քաղաքի եւ Կոտայքի մարզային վարչությունների ու Կոտայքի բաժնի ծառայողները պարզել են, որ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի միջնակարգ դպրոցի նախկին տնօրենը 2013-2016 թթ. դպրոցի պահակի հաստիքին հրամանագրել է որդուն, որը աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ որպես աշխատավարձ դուրս գրված 3 միլիոն 590 հազար դրամը յուրացվել է:

Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչության, Երեւան քաղաքի եւ Կոտայքի բաժնի ծառայողները պարզել են, որ Արմավիրի քաղաքի սպորտի եւ մշակույթի համալիր կենտրոնի նախկին տնօրենը ապօրինություններ է կատարել: Նախնական տվյալներով՝ 2013-2016 թթ., օգտագործելով պաշտոնական դիրքը, տարբեր մարզածեղի համար քաղաքացիների տված վարձավճարները չի մուտքագրել հաստատության հաշվեհամարին, այլ օգտագործել է անձնական կարիքների համար: Արդյունքում յուրացվել է 16 միլիոն դրամ: Հարուցվել են քրեական գործեր:

## Ուժեղացված ծառայություն մայրաքաղաքում



Դեկտեմբերի լույս 24-ի գիշերը մայրաքաղաքը սպասարկող ոստիկանության փարբեր սպորաբաժանումների ուժեղացված ծառայության արդյունքում բացահայտվեց հանցագործության մի քանի դեպք: Երեւան քաղաքի վարչության պարեկապահակության ծառայության գնդի ոստիկանները ուժեղացված ծառայություն սկսելուց առաջ հրահանգավորվեցին: Նրանք պետք է հասարակական կարգի պահպանությունից զարկանախեն ու թարմ հեղքերով բացահայտեն հանցագործության դեպքեր արագ արձագանքելով ահազանգերին:

Մաշպոցի պողոտայում պարեկապահները հայտնաբերել են առանց առջեղի համարանիշի «x6», որի վարորդը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ փարածք հրավիրված ճանապարհային ոստիկանների կողմից: Աջափնյակ վարչական շրջանում էլ հայտնաբերվեց հեղեղի համարանիշի թվերից մեկը բողոքված մեքենա: Այս դեպքում եւս վարորդը վարչական պատասխանատվության ենթարկվեց:



# Ուժեղացված ծառայություն մայրաքաղաքում



### Սկիզբը էջ 1

Արձանագրեմք, որ ուժեղացված ծառայությունը նաեւ կանխում է հանցավոր դրսևորումները: Պատահական չէ, որ դեկտեմբերի լույս 24-ի գիշերը հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ որեւէ ահազանգ չի հնչել:

Էրեբունու ոստիկանները գիշերը խաղաղ Դոնի փողոցում կասկածելի վարքագծով երկու երիտասարդի տեղափոխել են ոստիկանության Էրեբունու բաժին: Պարզվել է, որ 22-ամյա Արկադի եւ 18-ամյա Ավետիս Դավթյանների մոտ եղած հաշվիչ հայելին ու ծայրահեղ գողացված են: Եղբայրները հայտնել են, որ դրանք գողացել են Նուբարաշենի խճուղու շենքերից մեկի բակում կայանված «Օպել»-ից: Դեպքը կատարվել է նրանց բերման ենթարկվելուց ժամեր առաջ: Բացատրական աշխատանքի արդյունքում նրանք խոստովանել են, որ օրեր առաջ Էրեբունի եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում կայանված երեք մեքենայից եւս գողություն են արել:

Գիշերային ուժեղացված ծառայության ընթացքում անձնակազմ ունեցվածքի գողության դեպքեր են բացահայտել նաեւ ոստիկանության Կենտրոնական բաժնի անչափահասների գործերով ծառայողները: Նրանք Նար-Դոսի փողոցում նկատել են ռուսական համարանիշերով «Նիվա» մակնիշի ավտոմեքենա: Տեղում պարզել են, որ մեքենան փաստաթղթեր չունի, վարորդը՝ նույնպես: Տարածք հրավիրված ճանապարհային ոստիկանության ծառայողները մեքենան տեղափոխել են պահպանվող հատուկ տարածք: Դետազա միջոցառումներով պարզվել է, որ ավտոմեքենան գողացված է: Դեկտեմբերի 22-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքում մի տղամարդ հաղորդում էր տվել, որ իր «Նիվա»-ն գողացել են: Մեքենան հաշվառված է Դայաստանում: Այն հափշտակած երեւանի բնակիչ, 33-ամյա Արսեն Նորայրոյանը մեքենայի հայկական համարանիշերն ու փաստաթղթերը պահել է, իսկ մեքենայի վրա տեղադրել ռուսական համարանիշեր: Ոստիկանությունում պարզվել է նաեւ, որ այդ համարանիշերը եւս գողացված

են: Արսեն Նորայրոյանը ռուսական համարանիշերը գողացել էր Արաբկիր վարչական տարածքում կայանված մի մեքենայից, որի վարորդը եւս դիմել էր ոստիկանություն: Բայց սա էլ դեռ ամենը չէ: Ոստիկանության Մարաշի բաժանմունք տեղափոխված «Նիվա»-ի զննությամբ ոստիկանները բեռնախցիկում հայտնաբերեցին լինգ եւ մեքենայի պահեստամասեր: Դետազա միջոցառումներով պարզվեց, որ պահեստամասերը նույնպես գողացված են: Արսեն Նորայրոյանը խոստովանեց, որ հայտնաբերվածը գողացել է Զրաչյա Քոչարի փողոցի պահեստամասերի խանութից՝ բերման ենթարկվելու գիշերը: Ոստիկանության Քննաքննա-Չեյթունի բաժնի ծառայողները գիշերային շրջաօդային ընթացքում Պարույր Սեւակի փողոցում բացահայտեցին անձնական ունեցվածքի գողության փորձ: Նրանք նկատել էին մի տղամարդու, որը կասկածելի վարք էր դրսևորել: Երկաթե իրով հանել էր շենքի բակում կայանված մեքենաներից մեկի լուսարձակը եւ փոխանցել հեռվում սպասող մեկ այլ տղամարդու: Ոստիկանները անմիջապես մոտեցել էին: Կասկածյալները զգել էին երկաթե իրերն ու լուսարձակը եւ դիմել փախուստի: Ոստիկանները հետապնդել ու լուսարձակը վերցրած տղամարդուն բռնել էին: Խոսքը 33-ամյա Սամուել Գեղամյանի մասին է: Բաժնի պահպանվող հատուկ տարածք տեղափոխված նրա «Օպել»-ի զննությամբ հայտնաբերվեցին դիմակ, պտուտակահաններ եւ այլն: Ձնվեց նաեւ դեպքի վայրը, որտեղ հայտնաբերվեց «Պորշ» մակնիշի մեքենայի լուսարձակը եւ երկաթե իր:

Շարունակվում են միջոցառումները փախուստի դիմած անձի ինքնությունը պարզելու, հայտնաբերելու եւ քննությանը ներկայացնելու ուղղությամբ: Այսպիսին էր ոստիկանության երեւան քաղաքի վարչության ենթակա ստորաբաժանումների՝ դեկտեմբերի լույս 24-ի գիշերը իրականացրած ուժեղացված ծառայությունը: Բնակչության անորոշված ու սեփականության պաշտպանությամբ մտահոգ ոստիկանների գիշերային ուժեղացված ծառայությունները պարբերական են:

**Մարտուն ՄԻՄՆՅԱՆ**

# Տարեկան քաղաքացիական կրթության բեռնակր

2018-ը նույնպես պատմություն է դառնում: Դայաստանի Դանրապետության ոստիկանության համար այն հանցավորության դեմ պայքարի, օրինականության, հասարակական կարգի պահպանման ամենօրյա աշխատանքի տարի էր: Ոստիկանությունն իր վճռական գործելակերպով, որդեգրած քաղաքականությամբ վերստին փաստեց, որ ինքը երկրի ներքին կայունության ապահովման, քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխավորներից է՝ որդեգրած քաղաքականության առանցքը դարձնելով հասարակության հավատն ու վստահությունը համակարգի հանդեպ ամրապնդելու միտված ծրագրերը, որոնք կյանքի կոչելու համար միջոցառումները շարունակվելու են նաեւ 2019-ին: Հարունակվելու են անգիշում պայքարը հանցավորության դեմ, հակակոռուպցիոն մարտավարությունը, հասարակություն-ոստիկանություն կապի ընդլայնումը, օրենքի առջեւ բոլորի հավասար լինելու սկզբունքը: Առջեւում նաեւ նոր ծրագրեր են, նոր անելիքներ, նոր ձեռքբերումներ, որոնց լծվելու է ոստիկանությունը՝ հաստատակամ, վճռական, հանուն օրենքի ու ժողովրդի:

**Ներկայացնենք 2018-ի ամփոփող վերջին օրերի բրեւական խորհրդանշան:**

Առաջին հորիզոնականում գողություններն են: Այս հանցատեսակը միշտ «արդիական» է, չնայած երբեմն զիջում է դիտարկությանը ուրիշի առողջությանը վնաս պատճառելու դեպքերին:



Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնում էր, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ դռան փակված կոտրելու միջոցով մտել են վարձակալական հիմունքներով Հնդկաստանի քաղաքացիներին հանձնած իր բնակարանը եւ գողացել նրանց բջջային հեռախոսները, երկու հազար դոլար, հիսուն հազար դրամ, պայուսակ:

Գյուղի 24-ամյա բնակիչ Արեն Ա.-ն: Նա հայտնել էր, որ վնասվածքը ստացել է հանդիսությունների սրահի մոտ իրենից ծխախոտ ուղող անձանոթ քաղաքացու հետ վիճաբանության ժամանակ:

լոր դեպքերով քննություն է կատարվում:

Տարեկան «ակտիվ» հանցատեսակներից է նաեւ խարդախությունը:

Ոստիկանության Արմավիրի բաժնի դիմած ՌԴ քաղաքացին հայտնում էր, որ մայրը իրեն է կտակել Արմավիր քաղաքի Սահմանապահների փողոցի իրենց տունը, իսկ նրա մահից հետո, ժառանգության իրավունքով, իրեն տրվել է տան նկատմամբ սեփականության իրավունքի վկայական: Սակայն որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ տունը, ազգականներից մեկի նախաձեռնությամբ, չորս միլիոն դրամ վարկի դիմաց գրավադրվել է «Կոնվերս» բանկում ոմն Հայկ Հարությունյանի անվամբ:

Ոստիկանության Տարունի բաժնում խարդախության փաստով հետաքննվող գործը նույնպես բանկային գործարքի հետ է առնչվում:

Վանաձոր քաղաքի 25-ամյա բնակչուհին, չարաչափ 50-ամյա համաքաղաքացու վստահությունը, համոզել է նրան երկուսուկես միլիոն դրամ վարկ վերցնել խոստանալով ըստ ժամանակացույցի պարտաճանաչ մարել վարկը: Այնուհետեւ իր անվամբ օւլայն ձեւակերպել է վարկը եւ հափշտակելով գումարը՝ բանկում վճարում չի կատարել:

Տարեկան նաեւ նախկինում կատարված տասնյակ հանցագործություններ բացահայտվեցին, հայտնաբերվեցին տեղական եւ միջազգային հետախուզման մեջ գտնվող անձինք:

Իսկ ամենամտահոգին, թերեւս, մնաց ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրությունը: Դեկտեմբերի 15-ից 25-ն ընկած ժամանակահատվածում 128 պատահար, որոնց հետեւանքով 7 զոհ, 196 մարմնական վնասվածքներով հիվանդանոց տեղափոխվածներ:

Չմանրամասնելով տարեկան քաղաքացիական անցուղարձը՝ պարզապես հիշեցնենք համակցության կանոններին, օրենքի պահանջներին չենթարկվող մեր հայրենակիցներին՝ զոհեւ Ամանորի ու Սուրբ Ծննդի տոներին՝ հանուն ձեզ, հանուն ձեր ընտանիքի անդամների՝ չմթաղենք տոների խորհուրդը:

Իսկ ոստիկանության խնդիրը միշտ նույնն է՝ հասարակական կարգի պահպանմամբ կանխարգելել հանցագործությունները, բացահայտել դրանք եւ օրինախախտներին բերել օրենքի դաշտ: Տոնական օրերին աշխատելով ուժեղացված ռեժիմով՝ ոստիկանությունը ապահովելու է բոլորի ու յուրաքանչյուրի անվտանգությունը:

**Համարի ՊՈՂՈՍՅԱՆ**

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:









Table with 10 columns and 15 rows containing various symbols and text, likely a calendar or reference table.

Ուշադրություն
Հարգելի քաղաքացիներ
ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը...

Կապույտ - Բարեկամ և ստատարի է լինելու, հատկապես եթե երեխա եք ուզում ունենալ: Կյանքի բոլոր բնագավառներում հաղթանակներ կգրանցեք:

Ձուլ - Իրադարձություններով լի տարի է սպասում: Եթե միայնակ եք, անպայման կհանդիպեք ձեր երկրորդ կեսին:

Սևագլուխ - Չախսերի տարի է, բայց աշխատած գումարը կբավականացնի: Ուշադիր եղեք առողջությանը:

Սևագլուխ - Չախսերի տարի է, բայց աշխատած գումարը կբավականացնի: Ուշադիր եղեք առողջությանը:

Տախտորդ, համարի սկզբնական պատասխանները
Table with numbers and symbols for a game or puzzle.

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական 27312002739: Տրվել է 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 27.12.2018 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 7170: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Զպատվիրված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատու պատվիրատուն է: